



## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

#### Արձանագրություն

Արևելագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. Հունվարի 21 նիստի թիվ 1 նիստի  
Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամներից 16-ը:

#### Օրակարգում

1. Արաբագիտության ամբիոնի ասիստենտ Հայկ Քոչարյանի դասընթացի ծրագրերը և Ս. Կարաբեկյանի հետ համահեղինակության գրված մեթոդական ձեռնարկը տպագրման երաշխավորելու հարցը
2. Հայցորդ ձևակերպելու և ատենախոսության թեմաների հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցը
3. ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի կողմից լավագույն ուսանողների ներկայացման թեկնածուների հարցը
4. 2009-2010թթ բակալավրիատի և մագիստրատուրայի աշխատանքային պլաններում տեղ գտած փոփոխությունների հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

#### ԼՄԵՑԻՆ –

1. Արաբագիտության ամբիոնի ասիստենտ Հայկ Քոչարյանի «Իսլամ և Արևմուտք. Մշակութային բազմազանություն և գլոբալիզացիա» և «Մուսուլմ-քրիստոնեական վիճաբանական գրականություն» դասընթացի ծրագրերը և Ս. Կարաբեկյանի հետ համահեղինակության գրված «Ինչպես պատրաստել և իրականացնել ուսանողամետ դասընթաց. մեթոդական ուղենիշներ դասախոսների համար» մեթոդական ձեռնարկը տպագրման երաշխավորելու հարցը

2. արաբական բաժնի 2006-2007թթ ուս.տարվա շրջանավարտ Տաթևիկ Մկրտչյանի արաբագիտության ամբիոնում, Արմեն Հրաչիկի Իսրայելյանին իրանագիտության ամբիոնում հայցորդ ձևակերպելու հարց և իրանագիտության ամբիոնի հայցորդ Նվեր Շահենի Դավթյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավար նշանակելու հարցը:
3. ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի կողմից որպես լավագույն ուսանողների թուրքական բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Գոռ Մինասի Վարդանյանի, արաբագիտության ամբիոնից բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Արուսյակ Կոլյայի Անդրեասյանի և իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Նարե Արայի Միքայելյանի թեկնածությունները ներկայացնելու հարցը:
4. 2009-2010թթ բակալավրիատի և մագիստրատուրայի աշխատանքային պլաններում տեղ գտած փոփոխությունների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան բ.գ.թ. պրոֆ. Գ. Մելիքյանը, արաբագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար բ.գ.թ., դոցենտ Ս. Տոնիկյան, իրանագիտության ամբիոնի վարիչ բ.գ.դ. պրոֆ. Գ. Ասատրյանը, թուրքագիտության ամբիոնի վարիչ պ.գ.թ., դոցենտ Ա. Սաֆարյանը, ղեկանի տեղակալներ բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանը և բ.գ.թ., դոցենտ Վ. Ոսկանյանը, արաբագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Դ. Հովհաննիսյանը, դոցենտ, բ.գ.թ. Ս. Կարաբեկյանը և իրանագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Վ. Առաքելովան, ուսխորհրդի նախագահ Գ. Ավագյանը և Արևելագիտության ֆակուլտետի գիտժողովի քարտուղար պ.գ.թ., Ն. Քոչարյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ –

1. Երաշխավորել Արաբագիտության ամբիոնի ասիստենտ Հայկ Քոչարյանի «Իսլամ և Արևմուտք. Մշակութային բազմազանություն և գլոբալիզացիա» և «Մուսուլմ-քրիստոնեական վիճաբանական գրականություն» դասընթացի ծրագրերը և Ս. Կարաբեկյանի հետ համահեղինակության գրված «Ինչպես պատրաստել և իրականացնել ուսանողամետ դասընթաց. մեթոդական ուղենիշներ դասախոսների համար» մեթոդական ձեռնարկը տպագրման:

2. Ձևակերպել արաբական բաժնի 2006-2007թթ ուս.տարվա շրջանավարտ Տաթևիկ Մկրտչյանի արաբագիտության ամբիոնում, իսկ Արմեն Հրաչիկի Իսրայելյանին իրանագիտության ամբիոնում հայցորդ և հաստատել իրանագիտության ամբիոնի հայցորդ Նվեր Շահենի Դավթյանի «Իրանի իսլամական հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրը» թեկնածուական ատենախոսության թեման, և գիտական ղեկավար նշանակել պ.գ.թ., դոցենտ Ա. Գ. Ստամբոլցյանին:
3. Հաստատել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թուրքական բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Գոռ Մինասի Վարդանյանի, արաբագիտության ամբիոնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող Արուսյակ Կոլյայի Անդրեասյանի և իրանագիտության ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Նարե Արայի Միքայելյանի թեկնածությունները «Լավագույն ուսանող» մրցույթի համար ներկայացնելու հարցը:
4. Ընդունվեցին ի գիտություն 2009-2010թթ բակալավրիատի և մագիստրատուրայի աշխատանքային պլաններում տեղ գտած փոփոխությունները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈԶԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈԶԱՐՅԱՆ